ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔ-ԼՕ-2021/66, 30.07.2021թ.

Բողոք բերող անձ՝ «Արթուր Ռոբերտի Պարանյան» Ֆ/Ա

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21» բաց մրցույթ

Գնման առարկան՝ ՀԱԷԿ-ի №3, 4 տուրբոգեներատորների օժանդակ համակարգերի արդիականացման համար ապրանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ Հրավերի 6-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Բողոք բերող՝ Ֆ/ա Արթուր Ռոբերտի Պարանյան
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դ. Անհաղթ 6շ., բն 147
Հեռ: +(374 93) 091155
Էլ.փոստ՝ arturparanyan@mail.ru

Պատվիրատու՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՀԱԷԿ-Ի №3, 4 ՏՈՒՐԲՈԳԵՆԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐԿԱԾ ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ

ԲՈՂՈՔ

- ***Գործի հանգիրձ նկարագրությունը և բողոքի փաստերը.***

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Սույն Ընթացակարգին Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 6-րդ չափաբաժնի մասով նախատեսվել է Խողովակ, որով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

Խողովակ		անկար Ø14x2մմ, պող.08X18H10T ԳՈՍՏ 9941-81 Անվտանգության դասը 4 ըստ ՀՊ-001-97 (ՊՀԱՅԳ-01-011-97) **Սեյսմաանվտանգության կարգը II** ըստ ՀՊ-031-01 ՕԿ կարգը 4

Ցանկություն ունենալով մասնակցել վերը նշված մրցույթի 6-րդ չափաբաժնին՝ հարցումներ ենք կատարել տարբեր գործարանների, որոնցից ստացել ենք պատասխան, որ տվյալ խողովակները արտադրվում են՝ սակայն խողովակների համար չի սահմանվում Սեյսմաանվտանգության կարգ, միևնույն Ընթացակարգի Հրավերով սահմանվել է ոչ միայն Սեյսմաանվտանգության կարգ, այլ նաև Սեյսմաանվտանգության կարգ II, որը ոչ միայն իրականության մեջ չհանդիպող պահանջ է, այլ նաև նման պահանջ չի հանդիպել նաև այնպիսի փորձառու արտադրողների մոտ, որոնք երկար տարիներ զբաղվում են ատոմային բազմապիսի ապրանքների արտադրությամբ:

- *Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.*

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են **գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի **միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.**

2) պայմանագրի կնքման նպատակով **մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.**

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, **գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:**

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի **գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Եվ այսպես.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21» ծածկագրով բաց մրցույթ, որի Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 6-րդ չափաբաժնի մասով նախատեսվել է Խողովակ, որը մի շարք պահանջներից բացի նաև պետք է ունենա Սեյսմաանվտանգության կարգ II, որը <<մեղմ>> ասած իրականության մեջ որևէ արտադրող ընկերություն խողովակի համար երբեք չի տրամադրել և չի տրամադրում Սեյսմաանվտանգության կարգ II:

Անհասկանալի է մնում, թե ինչու համար է գնահատող հանձնաժողովի կողմից սահմանվել այսպիսի պահանջ, երբ արդեն տեխնիկական բնութագրով հղում է կատարվում կոնկրետ ԳՈՍ 9941-81-ին, քանի որ՝ տպավորություն է ստեղծվում, որ գնահատող հանձնաժողովի կողմից արհեստականորեն փորձ է կատարվում դժվարացնել, կամ կրճատել մասնակիցների շրջանակը՝ մասնակցության հայտ չներկայացնելու նպատակ հետապնդելով:

Հետևաբար գտնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից հրավերը կազմելիս թույլ է տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության մի շարք իրավապարտադիր նորմերի խախտումներ, որոնք իրենց հերթին հանգեցրել էր մասնակիցների շրջանակի ընդլայնման:

Ելնելով վերոգրյալից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ենք ներկայացնում նաև արտադրող կազմակերպության կողմից տրված պատասխանի էլ. Փոստի հասցեից արված արտատպման պատճենը:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ **եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկումէ գնման առարկայի բնութագրերը, նախառրակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:**

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունիպատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ղեկավարվելով Օրենքի ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ մասի 1-ին կետի <<բ>> պարբերության պահանջներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Պարտավորեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-15/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ Հրավերի 6-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն:

Առդիր՝ 5 թերթ:

Հարգանքով՝

Արթուր Ռոբերտի Պարանյան՝ _____

30.07.2021թ.